Մեր ազատամարտիկները նաև ստեղծագործում են. և՛ սիրում, և՛ ապտակում, և՛ պարտավորեցնում...
«կարդա՛նք նրանց»...

Արաբոյին

Սրտանց նվիրում եմ իմ քաջ հրամանատար Մանվել Եղիազարյանին՝
լեգենդար «Արաբոյին»
Հայկ Եղիազարյան /«Սպիտակ» ջոկատի մարտիկ/

Թուրք - ազերին ոտքի կանգնեց,
Իր պապերի ուղին ընտրեց
Գյուղ ու քաղաք հայաթափեց,
Քոչվոր ցեղով բնակեցրեց:
Կուշչի, Կամո և Ազատ
Գյուղերն ընկան շատ արագ,
Ոտքի կանգնեց Գետաշենը,
Փոքր գյուղ՝ Մարտունաշենը:
Մարտունաշեն փոքրիկ գյուղում
«Արաբոն» էր վերահսկում
Մեր օրերի հայդուկապետ՝
Քաջ Մանվելը՝ խիզախ ասպետ:
Ու կանգնեցին, ինչպես ասլան-
Նենգ թշնամուն դեմ-հանդիման,
Քաջ Արաբոն իր ջոկատով
Պայքարեցին կյանքի գնով:
Թշնամին երկյուղ, սարսափ էր ապրում
Երբ «Արաբո»-յի անունն էր լսում,
Չէ՞որ ծնվել էր մերօրյա ասպետ,
Մի նոր Արաբո՝ քաջ ֆիդայապետ:
Ոէ թեև մարտում նա վիրավորվեց,
Նրա վեհ հոգին երբե՛ք չընկրկեց,
Դեռ չապաքինված նորից մարտ գնաց,
Տուն վերադարձավ նա հաղթանակած: